

Նկատելի է թէ հակառակ Հ. Աւգոստինոսի լռութեան, Հ. Անտոն կը պատմէ՝ թէ Աւգոստինոս արքեպիսկոպոսութեան աստիճանին բարձրացած է եւ կարգուած վանահար Նախիջեւանի վանքին (1627—1653) : Փափագողք աւելի տեղեկութիւններ կրնան գտնել Բաջենցի մասին Գեորգի. Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանի «Սխական» պատուական գրոց մէջ, էջ 334—335: Իսկ ինքն Հ. Անտոն՝ Յրանսայի թագաւորէն 1000 ֆրանկ ստացած է իր ճանապարհի ծախուց համար, Արտաքին Գործոց նախարար Arnaud de Pomponneի ձեռքով, եւ պալատական կառքով առաջնորդուած է յարքունիս, ինչպէս կը նկարագրէ Scriptores ord. Praed. գրութիւնն, էջ 653 :

Կարեւոր կը համարենք աւելցունել նաեւ հոգ Բաջենցի նախորդ եւ յաջորդ եպիսկոպոսներու մէկ ցանկն, հետեւելով մեր սիրելի Նահապետին յիշեալ համագրութեան, էջ 388 :

1607—1620 Մատթէոս Երազմոս հայ :

1621—1627 Պօղ. Մարիա Զիտտադինոյ բուլոնիացի :

1627—1653 Օգոստինոս Բաջենց :

1653 . . . Յակոբ Ընտրեալ ի Հայոց :

1654—1664 Պօղոս Փիլրոմալի :

Կ. Յ. Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԺԷ ԴԱՐՈՒՆ ՄԷՁ

ԺԷ դարուն սկիզբը՝ Վրաստան եւ հայկական նահանգաց մեծագոյն մասը Թուրքաց ձեռքն էին : Բայց այս նահանգներուն հին պետերը պարսկաստանի փախստականներ էին, որոնք կը գրգռէին Շահաբքաս Ա նորէն ձեռք առնուլ պատերազմը : Սալմաստի փաշան, Ղազի խան, Օսմանեանց դէմ ապստամբելով, վերջապէս Շահաբքաս իր մտադրութիւնն ի գլուխ հանելու որոշումը տուաւ : Նուաճեց զԴավրէժ եւ զՆախիջեւան (1604 թուին), եւ բանակեցաւ Երեւանի առջեւ, միշտ հոգ տանելով պաշարեալներու առաջին հարուածին դէմ հանել Հայերն ու Վրացիները, զորս իր երկիրը կանչած էր կամ թէ վարպետութեամբ մը արքունիքը հրաւիրած : Շատերը կ'իյնային հոն : Երեւան ինն ամսէն միայն յանձնուեցաւ : Այս ժամանակամիջոցին մէջ Շահաբքաս իր հրամանատարներուն միջոցաւ նուաճեց Կարնոյ, Բասենոյ եւ Խնուսայ գաւառներն եւ Հայաստանի արեւմտեան ուրիշ մասերն, ուսկից մեծ բազմութեամբ գերիներ տարաւ :

Նախիջեւանի բնակչաց հետ բաւական անուշութեամբ վարուեցաւ եւ արտոնութիւն տուաւ անոնց որոնք կ'ուզէին մեկնիլ : Բայց շատերը

կեցան , պարսկական զգեստ հագնելով եւ իրենց նոր տէրերուն յառուկ ձեւով ածիլել տալով իրենց մօրուքը : Նկատմամբ Զուղայի բնակչաց , որոնք թափօրիւ իրեն ընդառաջ եկած էին եւ ամէնէն աւելի փայլուն ընդունելութիւնն ըրած , զիջած էր մինչեւ իսկ գինի խմել անոնց հետ եւ անոնց պատկերներուն առջեւ աղօթել . բայց համալուած միացած էր անոնց ճոխութեան վրայ եւ զայն իւրացնելու ցանկութեամբ , թէեւ անոնց շատ ազնիւ ընդունելութիւն մը ընելով :

Երեւանայ տիրածին պէս գաւառին մէջ հռչակել տուաւ իր իշխանութիւնը , եւ այս սեփականութեանը համար՝ Հայոց երկու հայրապետներէն պահանջեց մեծկակ զումարներ , զորս ազատած էին , կ'ըսէր , Օսմանցիներէն : Երրորդ հայրապետ մըն ալ , Սրապիոն , միեւնոյն բանին համար կրած չարչարանքներէն յեղեքիչներու կողմէ , — որոնք մինչեւ իսկ անոր ոտուրները կրակի մէջ զրին ստիպելու համար որ իր գանձն յանձնէ , — իր ստացած գաւաղանի հարուածներէն մեռաւ :

(1605) . Սակայն Օսմանցիներն իմացան Շահաբբասի արշաւանքն , եւ Զէլալօղլու Սինան փաշան բազմաթիւ զօրքերու բանակով մը Հայաստան զրկուեցաւ , հրամանաւ Սուլթան Ահմէդի , որ նոր յաջորդած էր իր հօրը Սուլթան Մահմուտ Գ-ի , Պարսից թագաւորն որ անոր դէմ դնելու բաւական զօրաւոր էր զգար ինքզինքն , եւ որուն զօրքերն Արծիէի Մահմադ փաշայէն դեռ նոր յաղթուած էին , հրամայեց իր զօրավար Ալահվէրդի խանին՝ շատանալ Պարսկաստան տանելով գերի բնակիչներն , իրենց հօտերով ու գոյքերով , եւ քանզեւ Վանայ ծովուն բոլորովքը գրտնուած երկիրն : Էջմիածինն ալ կողոպտուեցաւ նոյպէս , եւ Դաւիթ հայրապետն , ինչպէս նաեւ եպիսկոպոսներն ու վարդապետները , ժողովրդի միացած մասին հետ գերի վարուեցան . բայց Մեղքիսեդ յաջողեցաւ փախչիլ : Գերիներու թիւը քսաներեք հազարի բարձրացաւ . իսկ երկրին մէջ թողուցին բուն իսկ բնիկները միայն : Օսմանցիներու ապրուստի բոլոր միջոցներն ու ներքին նահանգներուն մէջ գտնուած ամէն տեսակ ապաւէնը տանելէ վերջը , Շահաբբաս ուղեց նոյն իսկ որ արդէն իր իշխանութեան տակն անցած բնակիչներն ալ Պարսկաստան տարուին , թէեւ 1605ի ձմեռը մօտեցաւ . եւ այս անողոք հրամանը գործադրուեցաւ՝ ինչպէս կը կարծուի՝ ամենամեծ խտուրթեամբ , Պարսից թագաւորին կողմանէ այս վիճակներուն ընդհանուր կուսակալ Էմիրգունէի՝ կամ Էմիրգունահի՝ տնօրինութեան տակ : Բայց Հայերէն շատերը իրենց հալածողներէն ազատուելու համար անմատչելի սեղեր կ'ապաւինէին Հաւուցթառի վանահայրն Մանուէլ եպիսկոպոս ու Գեղարդայ վանուց վանահարն՝ որչափ պաշար որ կրցան հաւաքել՝ ժողովրդի բազմութեան մը հետ միասին ապաստանեցան գաւառին ամենաբարձր լեռներուն մէջտեղը գրտնուած մեծ այրի մը մէջ : Էմիրգունահ իր զօրքերովն հասաւ անոնց եւ տեւէն , բայց Հայք կը մերժէին անձնատուր ըլլալ անոնց , եւ քարեր կը

նետէին Պարսից վրայ։ Սակայն զինուոր մը յաջողեցաւ լերան զագաթն ելն ել , եւ՝ հասնելով ալորին բերանն՝ սկսաւ կանչել Մանուէլ եպիսկոպոսը , զոր կը ճանչնար անձնապէս : Մանուէլ այնքան ապշեցաւ որ չի կրցաւ պատասխանել , եւ զինուորն անոր գլուխը կտրեց տարաւ իր հրամանատարին : Անգամ մը ճամբան հարթուելէն վերջը՝ պարսիկ զինուորներն եկան մեծ բաղմութեամբ եւ ջարդեցին կոտորեցին այս անպաշտպան ժողովուրդը : Քորազարաի ու Շախրշահանի ալիւսն ալ լաւ չկըրցան պաշտպանել իրենց մէջ ապաւինածներն : Հոն , թիմուրի պատեւրազմներուն ժամանակն եղածին նման , զինուորները ժայռերուն կատարն հասած՝ հրացանով կը սպաննէին այդ խեղճերը , եւ՝ երկար պարաններու միջոցաւ վար իջնելով՝ ի հուր եւ ի սուր կը մատնէին զանոնք , այս հիւրընկալ լեռներու խորքերուն մէջ :

Օսմանցիները Կարս հասնելուն պէս , Շահաբքաս հրամայեց իր զօրավարներուն եւ Հայոց երեւելիներուն՝ փութացնել գաղթականներու անցքն Նրասի գետէն : Այս նպատակաւ հաւաքեցին քանի մը փոքր նաւեր , նաւակներ ու լաստեր : Որովհետեւ ժողովուրդը Պարսից բաղձաւքին համեմատ չէր շարժիր եւ շտապիր երբեք , եւ նոյն իսկ շտաբը կը զիմադրէին , պաշտօնեայք անոնցմէ ոմանց ականջներն ու քիթր կտրեցին , մնացածները վախցընելու համար , եւ անոնցմէ երկուքն ալ—որոնց մէկն էր հոգեւոյս Առաքել հայրապետին եղբայրն Յովհանջան—սպաննեցին : Անոնց ցցի վրայ հանուած դիակներուն արհաւարիքն՝ ստիպեց խեղճ հայերն համակերպիլ , եւ գետին անցքը կատարուեցաւ ամենամեծ անկարգութեամբ , ինչպէս կը պատմին զայն հայ մատենագիրք : Իւրաքանչիւր ընթերցողի երեւակայութիւնն իրեն պիտի ներկայացընէ զիւրաւ այս տեսակ պատկերներ . եւ արդէն ճիշդ է որ մեր գլխաւոր հեղինակը՝ Ծրա Աւգոստինոս՝ այդ փառքն ունի : Ի լրումն գոթադրութեան՝ Շահաբքաս ներկայ էր անձամբ . բարկացայտ խօսքերով եռանդը կը գրգէր իր սպաններուն , որոնք իրենց չարաչար վարմունքովն ու բրաւութեամբը հակահարուածը կուտային գերիներուն , եւ կը ստիպէին զանոնք անձերին վտանգի ենթարկել գետին վրայ , ոչ մէկ տեսակ զգուշութեան հոգ տանելով եւ յայտնապէս վտանգելով անոնց կեանքը : Գետին անցքը կատարուելուն պէս՝ գաղթականներն առաջնորդուեցան Պարսկաստանի ներսերն , ամենասոսկալի ճամբաներով , լեռներու եւ ժայռերու վրայով , ուր ձմեռն անցունել տուին . որմէ ետքը՝ զարնան՝ աղբին գլխաւորները քաղաքները տարուեցան , ուր այսուհետեւ բաւական անուշութեամբ վարուեցան հետեւնին : Զուղայի Հայերն՝ ի մէջ այլոց՝ ընդունեցան իբրեւ բնակավայր Սպահանի թաղերէն մէկը , միւս կողմը Զէնդէ-բուշ գետին , որ կը թրջէ քաղաքը : Դալով հասարակ ժողովրդին , ցոյց տրուեցաւ անոնց շրջակայ աւանները , Լնջանի , Նրնջակի , Գանդիմանի , Զլակորի , Փառիաի եւ Փուլվարիաի վիճակներուն մէջ , եւ աղղը բնակեցաւ հը-

պատակ իշխանութեան մեղիքներու , որոնք ընկել երկրացիներէն ընտը-
րուած տեսակ մը ինքնօրէն պաշտօնեաներ էին : Այն լաւ վարմունքը զոր
տեսան Պարսից թագաւորին կողմէ , հաստատեցին ընդմիջտ այն վիճակ-
ներուն մէջ այս հարուստ եւ քաջարուեստ ժողովրդին մեծագոյն մասը :

Այս առաջին գաղթականութեան , որ տասներեք հազար ընտանիքէ
բաղկացած է , շուտով յաջորդեց երկրորդ մըն ալ , որ կը բարձրանար
տասը հազարի , Դավրէժի , Արդաւիւի , Երեւանի եւ Գանձակի շրջակա-
ներէն , որոնք հաստատուեցան վատառողջ երկիր մը—Գաւրաբազ , որուն
կլիման ջնջեց վերցուց ինչ որ խնայած էր սուրբ : (*)

ԲՐՈՍԷ

• • •

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՖՐԱ ԱՒԳՈՍՏԻՆՈՍԻ

Այս են վարք ֆրայ Ագոստինոս քահանային . լուիցէք :

Ես անարժան ֆրայ Ագոստինոս քահանայս . էի ի աշխարհէն Մեծ Հա-
յաստանոյ . ի գաւառէն Երինջակոյ ի գիւղէն Ապարաներոյ եւ աղգաւ
Հայ կրօնիւք հնազանդ ուղղափառ հաւատոյն Քի . ծնողքս իմ բարեպաշտ
ուխտեալ էին Այ որ զիս տային ծառայ ամենայն սրբոց . երբ եղէ ես . Ը .
ամենայ զիս տուին ծառայ ի դուռն ամենայն սրբոց . ես մեղաւորս ուսուցմ
առի Տէր Մաթիոս քահանայէն . այն ժամանակն մեր յերկիրն Օսմանլու
կու տէր . Ե . ասորի կարգացի . Ը . կանուժ սաղմոսն այլ բազում գր(ե)անք
հա՛րար արի . յեղեւ մին տարի խիստ քուռութիւն (—անխելութիւն) արի
այնուր յեզն . ամի մարդեղութեան հն մերոյ Յի Բի . ՌԶԴ էր որ Պարսից
թագաւորն երեկ վերայ Օսմանլուին բազում հեծելօք էաւ Օսմանլուէն բա-
զում յերկիր տիրեաց մեր աշխարհն մէկ ամ յեղեւ Օսմանլուէն ռարդար ա-
րեկ շատ հեծելօք . Պարսից թագաւորն հեծե(ա)լ առաքեաց Արդուրուժայ
բերանքէն հետ քեց առաջաւ արէց տարաւ իւր երկիրն հետ ամենեցուն
մեր աշխարհն էլ քեցաւ . եկին հեծե(ա)լքն հրամանաւ թագաւորին որ-
պէս կայծակն ի յերկնից մեղի մէկ ժամ խաղաղութիւն չի տուին որ ամե-
նայն մարդ իւր ապրանքն պահէլ էր թողինք տուինն ապրանքով լի
հօտն ի դաշտին հայրն որդին ուրացաւ մայրն ի դուստրն ուրացաւ .
այնպիսի ժամ Ած ոչ տայ իւր ըստեղծութեանդն դուս աշին ամենայն
մարդ իւր յերկրէն որպէս նախիւր եւ ինքեանք եղեն սրով եւ նիզակով
քշողք խառնեցան մէկզմէկ որպէս գառն ի ոչխարն խառնի լալն ու

(*) Նահաբբասի վրայ երկար ուսուցմաբերութիւն մըն ալ «Հանդ .
Ամս . » ի մէջ սկսած է հրատարակուիլ , զոր կը յանձնարարենք մեր ըն-
թերցողաց :

հառաչանքն ելաւ մինչեւ յերկինս . անօրէնքն յառաջ արին ժողովուրդն եւ իւրեանքն յեղն ընկան քեղերդեամբ խոցելով . հայր որդին չէր գլխեւ ոչ որդին ի հայրն . մայրն գուստրն չէր գլխեւ ոչ գուստրն ի մայրն . ամենեքեան մէկգմէկ կորուցին լալով . որպէս գրեալ է Դաւիթ մարգարէն իւր սաղմոս(ում) . երթալով երթալին եւ լային որ բարձրեալ տաւ նէին զսերմանս իւրեանց . ամենեքեան ի գերի վարեցան եւ մեղաւորս էի երիտասարդ հետ ամենեցուն գերի մնացին եկեղեցիքն Այ առանց քահանայի եւ առանց պատարագի ամենեքեան միայլանեալ առաջի անհաւատից հեծելով գնային ոչ առն կինն գիտէր եւ ոչ կինն ի առն . ոչ եղբայրն քուրն գիտէր եւ ոչ քուրն եղբայրն ամենեքեան էին մոլորեալ որպէս ոչխար որ ոչ լիցի հովիւ . եկաք հասաք ի գետն որ կոչի Արաստղ (==Նրասխ) խիստ մեծ որ մարդ առանց նաւի չէ կարիլ անցնիլ ամենայն ժողովուրդն լցին ի մէջն առանց նաւի եւ առանց տաւարի որն որ անցաւ որն որ ջուրն տառաւ որն որ հայրն կանչելով որն որդի ձայնելով որն մայրն կանչելով որն եղբայր ձայնելով որն որ քուր կանչելով որն որ քահանայ աղօթակելով շատոնք ի դետ խնխտեցան . եւ մեղաւորս այլ գետն կու տանէր մէկ ջրալշի աքի ընկաւ ձեռս Աստուծով դուս եկի լալով դէպի Ած հառաչելով ամենեքեան լալով անցնէին . երբոր անցաք այս անուն գետ Արաստղն թողին ոչ անօրէնքն որ մարդ հանգիստութիւն էր առել կամ չոր փոխել կամ թէ իւր որդիկն գտել ամենեքեան հառաչելով լալով անօրէնքն սուր դրին վերայ քչեցին . ի ճանապարհն որ երթայինք այն ինչ յեղ մնայր սպանէին . գիտէք որ այս ժողովուրդս չէին տանէ դուս եկեալ այլ ճանապարհ չի տեսեալ շատն ի սոցանէ ցրտէ եւ խորշակէ սօվու եւ նեղութեանց բազում ցաւի տիրացան . երեկոյին որ իջնէաք ի վաղն ելնէաք բազում մոռեալք մնային իջեւանքն եւ բազում հիւանդք . մարդի օժընդակութիւն չկայր որ թաղէր մոռեալքն . որպէս գրեալ է եւ ոչ ոք էր որ թաղէր զնոսա . ի ճանապարհն բազում կանայք դնէին իւրեանց ստընդեայ տղայքն ի վայր երթային վասն տկարութեան . այս ճանապարհս տեսնէաք եւ հայէաք ի աջ կողմն եւ անհալն եւ ամենայն կողմն ի ամենայն քարի քով եւ ամենայն խիւ քով երեխայք լալիս մէկն չկայր որ դիպցուցանէր զնոսա . բազում հիւանդք քահանայ ձայնում մէկն չկայր որ կատարէր զկարիսն նորայ . հեծեծելով առանց խոստովանութեան եւ առանց հաղորդի աւանդէին իւրեանց հոգիքն դառնութեամբ . որպէս գրեալ է սաղմոսեւորդուն . քահանայք նոցա անկան ի սուր . եւ զարիս նոցա ոչ ոք էր որ լայր . Դարձեալ Արկե(ա)լ ի սուր զժողովուրդ իւր . եւ զժառանգութիւն իւր անտես արար . ինչ առաջի ժամանակին Իսրայէլացոց զլուխն էր եկեալ շատ աւելի արեկ մեր հայ ազգին զլուխն . շատ բազում չար չարանաց հանդիպեցաք որ եւ մեղաւորս չի պատմեցի . — շատոց որդիք եւ դս(տ)երք անօրէնք տարան յեղեւ այս նեղութեանցս . Տր Ած ողորմած

Թագաւորն է ողորմեաց վասն այսչափ յառաջանացս • ձգեաց ողորմութիւն Պարսից Թագաւորին ս(ի)րտն հրամանք ատաքեաց մեզի քչոյ իշխանին որ Նախիչեւանոյ գաւառին եւ Էրինջակոյ գաւառին ժողովուրդն դարձոյ իւր տեղն եւ դու գնայ ի մէջ նոցա նստիւ պահէ • աւուր էր կ(ի)րակի ամենայն ժողովուրդն ելեալ էին առաւօտոյն աղօթ(ք) եւ հառաջանք դեպի Ած • հայեցաք եւ տեսաք թէ ի Թագաւորէն մարդ եկաց հրամանք բերաց թէ Նախիչեւանոյ եւ Երինջակոյ գաւառն դառնան յեդ • Երբոր լսեցաք այսպիսի բարի խրատ ամենեքեան ուրախութեամբ գոհութիւն մատուցաք Այ եւ ցնծութեամբ վասն այսպիսի բարեբարութեան որ աւարար Ած եւ ողորմեցաւ ընդ ժողովուրդեան իւրում ամենայն ժողովուրդն եղեն որպէս եղջիւր թէպէտ առաջ էին ակար որպէս գրեալ է սաղմոսերգոյն • գալով եկեացեն եւ ցնծացեն ոչք առեալ բերիցեն զորայս իւրեանց • եկինք հասանք մեր աշխարհն տեսաք ամենայն ապրանքն թալանաց շատ առն (ստուռն) եւ վանք կրակ տուած երած • դառն դարտակ ժողովուրդն մնացին Այ փառք տալով • յեդեւ այս չարչարանացս եւ մեղաւորս գընացի ի գիւղն Խօշկաշէն բնակեցայ ի վանքն սբ Քեղեքդեամբն Քի • այն տեղն ծառայութիւն Այ արի մինչեւ • Ը • ամիս այն տեղացն եկի մեր վանքն իմ վարդապետն տես • տեսայ իմ մայրն վաղջանաց • իմ եղբայրն գլուխ վեր կալաց գնացած եւ մեղաւորս այն ժամն երիտասարդ էի • տեսայ որ հայր մայր չունէի աշխարհս մէկզմէկ խառնուած վախեցայ անօրինաց կողմանէն թէ զիս չգողանէին տանէին միտք արի վասն Փռանկլստան գնալոյ • այն ժամանակն Պարսից Թագաւորն Նախիչեւանոյ տակին նստեալ էր լսեցայ թէ ի բանաքն Պարսից Փռանկի հէյի կայ • Ած յիշեցի գնացի ի բանակքն Պարսից գտայ Փռանկի հէյին գնացի մօտն տեսայ լաւ քրիստոն(ե)այ կացի մօտն • Գ • տարի նորայ չքօլն շատ Հայի գիրի (—գերի) ազատեցի ի անօրինաց ձեռնէ շատ լաւութիւն տեսայ ի նոցանէ • Գ • տարէն յեդն շահն կամ արեւտ այս հէյիս դնալոյ իւր աշխարհն • ի Ըսպայհան քաղաքէն դուս ելանք եկինք ի քաղաքն Ղազուին • հօն գտայ իմ վարդապետն եպիսկոս օրհնել ղէի գնալիս Հոռում քաղաք տեսաք մէկզմէկ շատ ուրախացաք • նայ ինձ պատմեաց ամենայն ինչ իւրեանց գլուխն էր եկեալ իմ յեդեւս որ հէնց սօվ եկէլ մեր աշխարհն որ իմ ընկերոցէն շատ ընկէլ հետ անօրինաց դնացէլ վասն սօվու այլ շատ բազում նեղութիւն ին քաշէլ որ չեմ կարիլ պատմել ամենայն • յեդեւ իմ վարդապետն վեր կալի գնացի հէյին մօտ ազալեցի հէյին թէ էս իմ վարդապետն այ գնալիս այ Հոռում քաղաք վասն եպիսկոպոս օրհնելոյ մեզ հետ տար հէյին մեր խաբրին համար Վիզի կալ հետ տանելոյ • իմ վարդապետն հետ Տր • Պետրոսին Միւրանշին եւ Փրայ Նիկօլին ոոցայ ամենեցուն ուղարխն (—էշ , հեծանելիք) ամենայն ինչ որ պէտք էր արեւտ • Ղազուինոյ քաղաքէն դուս ելանք եւլանք եկինք ի քաղաքն Արդայվէլ • Արդայվէլոյ դուս ելանք եկինք ի

քաղաքն Շամախի այս Շամախի քաղաքումս էինք հէնց շարժեցաւ քաղաքն որ շատ աշտարակ եւ տունք խորտակեցաւ բազում ժողովուրդ մեռան աշնպխի շարժմունք չինք տեսեալ մինչեւ ցայսօր քաղաքն եղաւ որպէս նաւ ի վերայ ծովու . եկաց շարժմուն (այնպէս) մինչեւ լաւ կէս ժամ . այս քաղաքէս ելանք գնացինք ի քաղաքն որ կոչի Դամուր զարի խիստ լաւ ամուր բերդ է եւ Աղեքսանդեր թագաւորն է շինալ պարըսպին մէկ եզերն ծովն որ է կոչի Դասփիական . մէկ եզերն է ի լեռան . ճանապարհն ձգած է ի մէջն բերդին որ եկող գնացողն չէ կարիլ անցնիլ եթէ ոչ մտցէ ի բերդն . խիստ շատ հինուոց բան կայ տեսնելոյ զարմանալի . հօն մեր պակասութիւնն տեսաք նաւ նստեցաք նաւեցաք եկաք դէպի Հաշտարխան քաղաքն . Լ. աւուր ի ծովն կացաք շատ նեղութիւն քաշեցաք ի մէջ ծովուն փոքրիկ նաւ էր մարդն շատ . մէկ հետ գիշերն ամենեքեանս քուն մտաց էաք . զարթնաք տեսաք ցամաքի մօտ շատ բազում փոքրիկ նաւէր գողի գողէրն էին ի աղգէն որ կոչին Դումուդ . Տր Ածն բարի հողմ արեւտ դէպի ծովն գնացին նոցանէ ազատեցաք . այնտեղացն ազատեցաք եկաք մէկ տեղ ծովու մն որ խիստ դժար էր որ կամէր նաւն ցամաքով գայր հէնց տեսաք Ած ամենակարողն մէկ նաւ հասուց մնց դարտակ նաւին բեռին կէսն դրինք էն դարտակ նաւի մէջն այնտեղացն էլ Ած ազաւանց . որ այնտեղն շատ բազում նաւ է կորուսեալ . այնտեղացն նաւեցաք հասաք ի քաղաքն որ Թարք որ է Մօսքօվու թագաւորին բերդ փայթէ շինաց որ է ի յերկրին որ այժմ կոչեն Դմուղըստան . խիստ ամուր որ զցայք եւ զցերեկ զինուորորնին պահեն վասն հաւուն թշնամեաց . այնտեղացն ուրիշ նաւ ճարեցաք քրիստոնէի նստաք ի նաւն եկաք ի քաղաքն Հաշտարխան որ է Մօսքօվոյ թագաւորին ի յերկրին Թաթարացոց . Մօսքօվու թագաւորն եւ իւր յերկրին ամենայն հոռոմի դաւանութիւն ունի . այս Հաշտարխանս է լաւ ամուր քաղաք երկու քաղաքէ մէկն փայթէ եւ մէկն գածէ եւ քարէ է . գտաք հօն Տր Դադիոսն վաղջանաց գնացինք գերեզմանն օրհնեցինք . այս քաղաքս է ի մէջ գետին որ կոչի Էդիլ քաղաքին չորս կողմն ջուր է գետին լայնութիւնն է . Ժ . մղոն . խիստ մեծ գետ . շատ մեծ նաւեր ի մէջն կու բանի այս դեռս վեր կերթայ մինչեւ Մօսքով քաղաքն որ է յաթոթ թագաւորին . այս քաղաքիս իշխանն չէր թողուլիս որ ելլին մէկն ճանապարհովն գնէր դէպի Մօսքով վասն Մօսքովու թագաւորին իշխանքն տուէլ ին իւրեանց թագաւորն սպանէլ . այլ ուրիշ սուա թագաւոր եկեալ էր բազում հեծելօք ի Մօսքով քաղաքն պատէլ թէ ես եմ թագաւորն ուզին զիս սպանանէին փախեայ այժմ իմ է թագաւորութիւնն սուա զրուց է ես եմ թագաւորն մեռած չեմ . այս Հաշտարխան քաղաքս հնազանդեալ էր այս սուա թագաւորիս . այս պատճառիս համար չէին կամ տալ գնալո ի մէկն ճանապարհին քաղաքնին էին հնազանդ Մօսքովու իշխանացն . յեղեւ մեղ կամ տուին գնալոյ ի յանապատ տեղով . Մ . գինուոր

տուին կլլին մարդ երկու ձի առինք մէկ հաց բարձինք մէկն հեծանք Ած յիշեցաք ընկաք այս անապատ ճանապարհս գնացինք . Ա . ամիս շինութիւն չտեսաք յեղեւ հասաք շինութիւն . այս անապատս շատ մեծ գետ տեսաք ձուկն առատ պտուղն շատ խոտն բազում ծառօք խիստ բարելի աշխարհ ապայ մէկ այիպ ունի խիստ մոծակ կայր ի մոծակէ շատ ձի սառակեցան երբ իջնէաք ամենայն մարդ տեղաւար շինէր ի մէջն մտնէր : յերբ որ շինութիւն հասաք Այփառք տուինք թէ Տր Ած մեզի անջրդի ճանապարհի տեղէ հասուց շինութիւն . այս շինութիւնքս էին սուտ թագաւորին մինչեւ ի Մօսքով քաղաքն գնացինք բազում քաղաքու բերդ տեսաք ամենայն էր այս սուտ թագաւորիս հնազանդեալ . հասաք ի քաղաքն որ կաշի կալօգայ կլլին իւր տոյնն եղիր հօն . իմ վարդապետ Տր Մաթիոսն Տր Պետրոսն եւ Ֆրայ Նիկօյն մնացին հօն կլլին տան վերայ . մեք գնացինք մօտ սուտ թագաւորն որ էր հեւի . Գ . աւուր ճանապարհ այս քաղաքէս հասաք մօտ թագաւորն խիստ բազում հեծելօք պատեալ էր ի մեծ քաղաքն Մօսքով . մեք չտեսաք քաղաքն ապայ տեսողքն մեզ պատմեցին թէ խիստ լաւ մեծ քաշաք է . ի մէջն մէկ զանգակ կայ որ ժամ կու ձայնեն . Ճ . մարդ կու քաշէ . թագաւորն կլլին խիստ լաւ ընկալաւ եւ կամ արեւտ գնալոյ Լէհ . յետ դառանք եկինք հասանք կալօգայ տեսանք Ֆրայ Նիկօյն վաղջանաց . էլլին տունն վեր կալինք գնացինք դէպի Լէհ Այ աջողութեամբն հասաք Լէհ հօն Լէհոյ թագաւորն էլլին լաւ ընկալաւ . Լէհոյ աշխարհն է լաւ ուղիղայփառ քրիստոնայ : հօն ամենայն քաղաք որ մտնէաք ի մէջն վանք կայր Գարոգողաց կարքէն տիրերին խիստ լաւ հարգիք անէին . եկինք հասանք ի քաղաքն որ կոչի Գարայքով խիստ մեծ քաղաք է եւ ամուր բերդ ունի թագաւորին աթոռն հօն է . կարքէն Գարոգողաց մեծ վանք կայ ի մէջ քաղաքին անուն եկեղեցին սբ Նրորորդութիւն . ի մէջն . ՃՄ . միայբան կայ . եւ սբ Խացինթիւն տալն գերեզմանն հօն է . քաղաքումն . Մ . վանք ու եկեղեցի կայ . խիստ լաւ հարգիկ արին տիրերին : յեղեւ թագաւորն էլլին կամ արեւտ գնալոյ մօտ արքայն քրիստոնէից որ է թագաւոր Ալամանացոց եւ Մաջաւրին . էլլին եթող իւր տոյնն Գարաքովու մէկ կոյսանց վանքում հէնց մարդ չունէր որ զնէր իւր տան վերայ էլլին խնդրեաց իմ վարդապետէն թէ ես հէնց մարդ չունիմ դնիմ տանս վերայ Ած սիրիս ես ձեզ այսչափ լաւութիւն արի դուք էլ թողէք Աւգոստինոսն իմ տան վերայ կենայ չուրի . Զ . ամիս ես էլ ձեր լ(աւ)ութիւնն մոռանալ չիմ . Զ . ամէն յեղն էլ ողորկիմ գայ ձեզ հասանու ի Հոռում քաղաք . յեղեւ իմ վարդապետն կամ արեւտ ինձ կենալոյ . ես կացի հօն եւ իւրեանքն գնացին . չուրի մէկ տարի կէս կացի էլլին տան վերայ յեղեւ էլլին մարդ ողորկեց իւր տունն վեր կալինք տարանք մինչեւ Ըսպանեայ . ի ճանապարհին խիստ շատ երկարեցանք . յերբ ի Գարաքով քաղաքէն դուս ելանք մինչեւ . Դ . աւուրն հասաք ի յերկիրն արքային քրիստոնէից մինչեւ . Խ . աւուրն

հասաք ի քաղաքն որ կոչի Համբուրք ի ճանապարհն շատ բազում բերդ գեղ ու քաղաք տեսաք խիստ գեղեցիկ անպատմելի գեղեցկութիւն զաւննայն էին արքային քրիստոնէից խիստ բարելի յերկիր է շինութիւն շինութեան ի վերայ լաւ . քրիստոնէայք . այս Համբուրք քաղաքս է ծովափ խիստ բարի քաղաք հօն նաւ ճարեցաք մտաք նաւն նաւեցաք դէպի Լիզբուայ քաղաքն . է . շաբաթ ի սեծ ծովուն կացաք խիստ արեկործումն տեսաք Այ աջողութեամբն հասաք ի քաղաքն որ կոչի Լիզբուայ խիստ մեծ քաղաք է գեղեցիկ շինաց քաղաքն մեծ շատ է Լստամբուլոյ վերայի մէջն . Ռ . եկեղեցի աւել կայ եւ վանք . Ըսպանիոյ թագաւորին է քաղաքն հօն իջեւանեցանք . Ժ . աւուր . այս քաղաքէս մինչեւ թագաւորին արթոյնիստ քաղաքն . Ժն . աւուր ճանապարհ է . ամենայն ինչ պէտ էր տեսաք դուս ելանք գնացինք դէպի Մատրիլ քաղաքն որ է թագաւորայնիստ . ի ճանապարհն շատ բերդ գեղ ու քաղաք տեսանք գեղեցիկ լաւ քրիստոնէայք Այ աջողութեամբն հասաք ի քաղաքն Մատրիլ էլշին հօն գտաք իւր սուռնն սուր ինքն . ես գնացի դէպի սբ Յակոբ որ էր հեռի այս քաղաքէս . Ի . աւուր . յերբ ելայ ճանապարհ առաջի օրն խիստ նեղութիւն քաշեցի որ միտք արի թէ գնամ ոչ այն աւուրն հասայ մէկ վանք որ կոչի Ըսկուռնալ որ է խիստ զարմանալի շինած մէջն եւ ի դուռն շէնքն ամենայն մառմարիայ ի մէջ եկեղեցին կայր բազում աշտանակ եւ կանթեղք արծաթեղէն եւ ոսկեղէն . Գ . Ը . միայրան կայ մէջն սբ Զերանիմոսի կարգէն . թող գնացողն եկողն որ հանապազ . Գ . աւուր հաց կուտան եւ ամենայն պէտան . մէջն գրկայտոյն կայ որ . Մ . գաղ երկայնութիւն է եւ . Ին . գաղ լայնութիւն է գրկով լի զամենայն ոսկով կազմած եւ ամենայն ցեղ լեզուէ ի մէջն կայ . Խ . ջորի հանապազ կերակուր կու բերէ եւ ըմբելի եւ ամենայն պէտան . ի մօտ վանքին է շինած գեղեցիկ դարպաս թագաւորին որ թագաւորն ամառն հօն կու բնակէ այսպիսի վանք եւ դարպաս փոքր կայ ի բոլոր աշխարհս : այնտեղացն ելայ . Ե . աւուրն հասայ ի քաղաքն որ կոչի Սալամանքայ խիստ մեծ քաղաք է բազում դպրատուն կայ ի մէջն ամ ցեղ լեզու հօն կոյսնեն եւ ամենայն ցեղ ազգէ հօն կարդացող կայ . եւ խիստ զարմանալի վանքեր եւ եկեղեցիք կայ . մեր կարգէն . Բ . Ը . միայրան կայ եւ խիստ լաւ վանք . եւ անթիւ վարդապետք ի այս քաղաքս . այնտեղացն դուս ելայ . Բ . աւուրն հասայ ի քաղաքն Սամբօս խիստ լաւ քաղաք եւ եփանութիւն խիստ լաւ վանքեր եւ եկեղեցիք կայ ի մէջն . այնտեղացն դուս ելայ . Ժ . աւուրն հասայ սբ Յակոբ այն աւուրն էր վիճիչ Հոգազաւրուտեանն վաղեան աւուրն տունն կատարեցին ես մեղաւորս խոստովանեցայ եւ հաղորդ առի այն աւուրն խիստ լաւ զարդարել (է)ին եկեղեցին գեղեցիկ թափուր արին . Ը . կարտինար հանապազ հօն կու բնակին ամենեքեան եպիսկոպոսական զգեստ էին յագեալ . եւ բազում ոսկէ եւ

արծաթէ խաչ եւ գաւազան էին վեր առեալ եւ շատ սրբոց մասունք ամե-
նայն ոսկով պատած եւ սք Յակոբոս Ալփեան գլուխն ի թափուրն վեր
էին առեալ իւր պատկերն ոսկով շինած այ մինչեւ ի դոսկայ տեղն ի գլխին
անգին թագ էին եղեալ որ գինն Ած լաւ գիտէ . Դ . քահանայ յօժարութեամբ
վեր կուեն . եւ սք Յակոբոյ գերեզմանն մեծ խորանին տակին ա' դուռն
մեծ բեմունմն այ . պապէն բանադրանք կայ որ ոչինչ մարդ չէ կարիլ
դռ(ւ)ոն բանալ եւ վեր իջնիլ տեսնուլ գերեզմանն սրբոյն . եւ գերեզմանին
վերա . ԲԺ . կանթեղ կայ մեծիմնեմ եւ արծաթէ եւ այլ բազում հանա-
պաղ վառ են . ամենայն քրիստոնայ թագաւորի կանթեղ եւ տաճար կայ
հօն շինած . եւ սք Յակոբոյ գաւազանն ի մէջ եկեղեցումն է եւ երկա-
թով պատած է վասն եկող եւ գնացողքն չկտրաւեն . եւ մէկ դուռն կայ եկե-
ղեցուն մօտ գերեզմանին որ կոչեն Դուռն Ողորմութեան որ է . է .
տարէնն մէկ հետ կու բացուի երանի այնոցիք որ այն աւուրն որ բացուի
հօն լիցին . այս սք եկեղեցին երկու տակ է որչափ որ վերն է եւ այն-
չափ վայրն է խիստ զարմանալի գեղեցիկ շէնք . եւ . Խ . մանկունք
հանապաղ երգեն եւ շարականեն եղանակաւ եւ բարբառի . եւ
խիստ լաւ քաղաք է եւ ետանութիւն եւ այլ բազում գեղեցիկ վանքեր
եւ եկեղեցիկ կա հօն շինած որ մարդ ի բերան չէ կարիլ պատմել ամե-
նայն . սք Յակոբա մինչեւ Եղբր Ածածին . Գ . աւուր ճանապարհ է . ապայ
ես գնացի ոչ վասն ընկեր չունելոյն . այն սք տեղն ուխտս կատարեցի
դուս ելայ գնացի կէս աւուրն հասայ քաղաքն որ կոչի Պատրոնա այն-
տեղն սք Յակոբայ շատ ուխտատեղ տեսայ . եւս առաւել այն լեառն որ
իւր աշակերտօքն բնակել ա . այն ժամանակին որ էն աշխարհն կապաշտ
էին . եւ նաւի տեղն որ յերուսաղէմա հետ մարմինն բերէլ ա' հօն . այն-
տեղացն դուս ելա յետ դառայ դէպի Մատրիլ այն ճանապարհովն որ գնա-
ցէլ(է)ի ի ճանապարհն բազում գեղ ու բերդ ու քաղաք կայր . ԺԵ .
աւուրն հասայ ի քաղաքն Մատրիլ ի ճանապարհն ուխտ (է)ի արեւ որ
առողջ հասանում Մատրիլ գնամ Ածածինն որ կոչի Թօշայ Ածածին խիստ
հրաշալի է որ բոլոր աշխարհէն նորա ուխտուորն պակաս չէ մէջն . ԺԶ .
կանթեղ կայ արծաթէ հանապաղ վառ եւ զարմանալի վանք է մեր կարքէն
է միաբանքն . Զ . միաբան կայ ի մէջն . ես որ հասայ քաղաքն մեկն գը-
նացի Ածածինն . այն ժամն որ ես մեղաւորս իմ ուխտս կատարում էի
ի մէջ Ածամօր եկեղեցումն այն ժամն թեկզատեն տունն վեր էր կալել
գնացէլ իմ եղբարն էլ հետն դէպի Ընկլիզի աշխարհն ես որ եկի Ածածընէն
էլ ինն տունն թէ նոր դուս ելած գնացած . ես էլ հայեցայ որ Այ կամ
չկէր որ ես նոցա հետ գնացէլ (է)ի միտք արի թէ գնամ դէպի Հոռոմ
քաղաք մէկ Հայի եպիսկոպոս կայր այս քաղաքումս . Ա . շաքաթ հետն
կացի Ած իւր բարի տայ խիստ լաւ ընկալաւ մեզ հօն իմ բանս տեսայ
դուս ելայ դէպի Հոռոմայ . Ը . աւուրն հասայ ի քաղաքն որ կոչի Սա-
րայգօզայ խիստ մեծ քաղաք հօն տեսայ Ածածին եկեղեցին որ խիստ

հրաշալի է այնտեղն է որ Ածածինն սբ Յակոբայ երեւացել այ եւ կոչի Պիլաբայ Ածածին եւ այլ բազում եկեղեցիկ եւ վանքէր կայ հիանալի եւ զարմանալի . եւ ի մէջ Ածածինն . Կ . կանթեղ արծաթէ հանապազ վառէ . այն տեղացն դուս ելայ . Գ . աւուրն հասայ մէկ վանք որ կոչի Փրկիչ հօն եկեղեցին մէջն . Ա . կարաս կայ փոքրիկ որ հանապազ ձէթ կու քրտնի այն ձիթէն աշխարհէ աշխարհ կուգան տանեն ամենայն ցաւի դեղ է Այ ողորմութեամբն այնպիսի հրաշք տեսայ եւ զարմացա գոհու թիւն տուի Այ . այսպիսի բարերարութեանց . այնտեղացն դուս ելայ . Զ . աւուրն հասայ Մօնարարթոյ Ածածինն այս Մօնարարթս է բարձր լեռն որպէս բօլ ու ջրով եւ ծառով խիստ լաւ ճանապարհ ունի ի վերայ լեռնին կայ վանք որ կոչի Ածածին խիստ զարմանալի եւ հիանալի եւ հրաշալի տեղ է ամենայն կողմաշխարհէս նորա ուխտ(աւ)որն պակաս չէ եկեղեցին ամենայն ոսկիակազմ այ եւ . Ը . կանթեղ ոսկէ եւ արծաթէ հանապազ վառ է ամենայն թագաւորի կանթեղ կայ հօն . եկողի եւ գընացողի . Գ . աւուր կերակուր կուտան եւ ըմբելի . ԲԸ . միաբան կայ մէջն սբ Բէնէթիքոսոյ կարքէն եւ . Խ . ջորի հանապազ կերակուր եւ ըմբելի կու կրեն . եւ լեռնին չորեքկողմն ճգնաւորով լի են եւ ամենայն ճգնաւորի իւրն ջոկ եկեղեցի եւ տեղավար ունի այսպիս տեղ ի բոլոր աշխարհս փոքր կայ եւ մեղաւորս ուխտս կատարեցի ելա ճանապարհ . Ա . աւուրն հասայ ի քաղաքն Բարսալօն խիստ մեծ թագաւորանիստ քաղաք է իծօլի եղեր խիստ շատ եկեղեցիկ եւ վանքէր կայ ի մէջն զարմանալի չինած . եւ սբ Ռայմունդոսի գերեզմանն հօն ա մեր կարքէն այ . այս քաղաքս Լսպանիոյ թագաւորին է Մատրիլո մինչեւ այս քաղաքս անհամար քաղաք բերդ եւ գեղ տեսայ լաւ աշխարհ եւ բարի քրիստոնէայք ամենայն Լսպանիո թագաւորն է . հօս նաւ տեսա եւ մտայ մէջն դուս ելանք . Ժ . աւուրն հասաք ի քաղաքն որ կոչի Ջենուայ իծօլումն խիստ կործանումն տեսայք այս Ջենուայ քաղաքս խիստ հարուստ ա եւ սիրուն եւ խիստ ամուր լաւ նաւերաց քանդաւ այ եւ անթիւ եկեղեցիկ եւ վանքէր կայ ի մէջն ամենեքեան մարմատիայ եւ ոսկիակազմ . իւր գլուխ թագաւորու թիւն է եւ սբ Յովաննէս Մկրտչին մարմինն հօն է ի աւագ եկեղեցին է մեծ պատուով . այն տեղացն ելա . Ե . աւուրն հասայ ի քաղաքն Թուրին որ խիստ մեծ քաղաք է թագաւորանիստ իւր գլուխ այս քաղաքի թագաւորն Ածածին Կոյսին ցեղէն է եւ Գրիստոսոյ վարչամակն այս քաղաքումն է մեծ պատուով եւ անթիւ եկեղեցիկ եւ վանքէր կայ հիանալի չինած ամենայն մարմառեայ եւ ոսկիակազմ . ի ճանապարհն մինչեւ այս քաղաք քաղաքի վերայ եւ գեղ գեղի վերայ է այստեղէս ելայ . Ը . աւուրն հասայ Միլան խիստ մեծ քաղաք եւ Լստամբօլ չափ Լսպանիայ թագաւորին է մինչեւ այս քաղաքս աւուրն . Բ . քաղաք անցանէի թող զգեղն . այս քաղաքս ունի . Ռ . եկեղեցի մէկ քան զմէկ պայծառ եւ բազում սբոց մասունք (կան) եւ գերեզմանք ի մէջ ամեցունն սբ Ամբրոզիոսի

եպեսկոպոսի գերեզմանն եւ սրոց մարտիրոսաց Տերվաղիոսի եւ Փրօթա-
զիոսի գերեզմանն եւ սբ Պետրոսի մարտիրոսին գերեզմանն մերկաբքէն, եւ
սբ Կառօլոսի եպիսկոպոսի եւ կարտինալի գերեզման որ նոր է սրբոց զասն
դասաց, եւ այլ բազում սրբոց գերեզմանք եւ անթիւ մասունք . եւ Վրիս-
տոսոյ, Ա. բեւեռն ամենեքեան սոքայ մեծ պտտուով կան, եւ Մովսէս մար-
գարէին շինած պղընծէ օծն որ շինեաց անապատին բաւ է գիտացողացն,
այստեղացս ելայ . Է . աւուրն հասայ ի քաղաքն Բօնօնեայ խիստ մեծ եւ
թագաւորանիստ քաղաք պապին է մինչեւ այս շատ բազում քաղաք եւ ան-
թիւ գեղ տեսայ եւ ամուր բերդ էր որ բերան չէ կարիլ պատմել նոցա գե-
ղեցկութիւնն ամենայն բարի քրիստոնէայք . այս քաղաքումս է սբ Դո-
մինիկոսի հօրն մերոյ գերեզմանն եւ խիստ պայծառ ոսկիակազմ եւ մար-
մառեայ եկեղեցի է եւ վանք . ՃՄ . միաբան կայ մէջն մեր կարքէն հօն
ուխտս կատարեցի զուս ելայ . Է . աւուրն հասայ ի քաղաքն Յիւրօնցիայ
խիստ մեծ քաղցրն քաղաք է եւ գրանդ դուկին տեղն է իւր գլուխ թագա-
ւոր է . այս քաղաքումս . Խ . կոյսանց վանք կայ եւ այլ բազում եկեղե-
ցիկ եւ վանքէր եւ սբ Անդոնինոսի եպիսկոպոսի մեր կարքէն է գերեզ-
մանն հօն է . եւ այս քաղաքիս աւաք եկեղեցին խիստ զարմանալի չէնք
այ եւ մեծ . ԳՃՄ . հոգի աւելի կու տանի բարձրութիւնն . Ճ . գաղ աւելի
է մէջն դուռն անգին քար եւ մարմառ է այնպէս աշտարակն ուր զան-
գակն կու քաշեն երբ մարդ հայի բարձրութիւնէն աչքն սեւանա ամենայն
սեւ սպիտակ մարմառով է շինած եւ բազում զարմանալի բանէր որ մար-
դի չէ կարիլ պատմել . եւ այնտեղացն ելայ . Գ . աւուրն հասայ ի քա-
ղաքն որ կոչի Սէնիայ խիստ մեծ թագաւորանիստ քաղաք գրանդ դուկին
է եւ քաղաքիս աւաք եկեղեցին խիստ գովելի է անթիւ մեծ է մէջն եւ
դուռն ամեն սեւ ու սպիտակ մարմառեայ է եւ անգին քարերով եւ զար-
մանալի աշտարակ մարմառեայ եւ այլ բազում եկեղեցիկ եւ վանքէր
ամենայն ոսկիակազմ եւ գեղեցիկ . մինչեւ այս ի ճանապարհն խիստ շատ
քաղաք եւ գեղ անցայ մէկ քան զմէկ գովելի ամեն բարի քրիստոնեայք,
այստեղացս ելայ . Զ . աւուրն հասա ի մեծ քաղաքն Հոռոմայ ուր է գլ-
լուխ ամենայն քրիստոնէից մինչեւ այս ի ճանապարհն բազում քաղաք
եւ գեղ անցայ ամենայն բարի քրիստոնէայք . եւ ի այս սբ քաղաքս է
զարմանալի եւ հիանալի եւ բազում սրբոց գերեզմանով եւ մասով լի .
Ռ . եկեղեցի աւել կայ ամեն մարմառեայ եւ ոսկիակազմ որ մարդ չէ
կարիլ ամենայն պատմել . ապայ . Է . եկեղեցին պատմեսցուք որ ինչպէս
փառօք եւ պատուօք կայ մինչեւ այսօր որչափ ուխտուոր սրայս քաղաքս
կուգայ մինչեւ այս . Է . եկեղեցիս ուխտ չանի ուխտն ընդունելի չէ .
Առաջի եկեղեցին է գլխաւոր առաքելոցն սբ Պետրոսի եւ սբ Պողոսի խիստ
մեծ եւ զարմանալի որ . Ի . հետ ՃՄ . մարդ մէջն մտնու դեռ տեղ շատ
կաւ . Զնայ . ԲԺ . գուռքեղ կայ վերէն եւ բազում կամար ամենայն ու-
կակազմ մարմառեայ եւ անգին քարով . սրբոց գերեզմանն ի մէջ եկե-

դեցոյն է վերա գերեզմանին բազում ոսկէ եւ արծաթէ կանթեղ հանապազ
վառէ եւ բազում դարպաս ունի եկեղեցուն հանդերձ է խաչ է գաւազան
է սկ(իւ) է սրբոց մաս է անթիւ եւ անհամար . եկեղեցին աւուրն . ՃՌ .
կարմիր դարպաս կու մտնու . եւ այնչափ է բարձրութիւնն որ մեծ դուռ
բեթին գլխին խաչին տակին խնձոր(ի) նման . ԺԲ . մարդ կու սաղի տա-
կէն հետ մէկ խնձորի չափ կ(ե)րեւա . Ա . դուռն կայ Ողորմութեան . ԻԲ .
տարէնն մէկ հետ կու բացւի Այ բարերարութեամբն երանի այնոցիկ որ
այն աւուրն հօն լիցին . այս եկեղեցիս զարմանալի գեղեցկութիւնն
մարդ չէ կարիլ պատմել . սբ Պապին դարպասն մօտ եկեղեցին է եւ եկե-
ղեցիս այս երկու տակ է այսպիսի մեծ եկեղեցի եւ պայծառ գեղեցիկ
չէնք ի բոլոր աշխարհս չկայ հանապազ . ԳՃ . մարդ վերէն կու բանի եւ
չէնքն նորոգի . այս եկեղեցես կու գնայ սբ Պողոս որ է քաղաքէն դուռ
խիստ զարմանալի եկեղեցի է մէջն . ԲՃ . սուռն (—սիւն) կայ մար-
մառէ ամէն սուռն . Գ . մարդ ի խտիտ յօժարութեամբ վերայ կուգայ .
եկեղեցին այնչափ մեծ է ամեն ոսկիակազմ եւ անգին քարէ եւ անթիւ
սրբոց գերեզմանք կայ մէջն եւ մասունք . այն տեղացն կու գնայ . Գ .
աղբիւրն ուր սբ Պողոսոյ գլուխն հատել ին . Գ . հետի թոել ա եւ երես
հետս Յս ասել եւ . Գ . աղբիւր է բիւել հօն մէկ տաճար կայ որ . ԺԱՌ .
մարտիրոսաց մասով լի է եւ այլ բազում սրբոց մասունք եւ գերեզմանք Գ
եկեղեցի մէկտեղ են մէկ քան զմէկ գեղեցիկ եւ ոսկիակազմ , այստեղացս
կու գնայ եկեղեցին որ կոչի Աւետեաց ԱՅաթին լաւ պայծառ եկեղեցի եւ
բազում սրբոց մասունք կայ հօն եւ գերեզմանք . այնտեղացն կու գնայ
սբ Սեփաատիանոսի եկեղեցին որտեղն կոչի Բաբախուրայ . այս եկե-
ղեցումս կայ բազում ջառներ (cavités) որ կռապաշտի ժամանակին
քրիստոնէյաքն հօն թաքչիլ են ելէլ եւ հօս կայ բազում սրբոց մասունք
ամեն ոսկով եւ արծաթով պատած . եւ շատ սրբոց գերեզմանք խիստ
գեղեցիկ պայծառ եկեղեցի է ոսկիակազմ եւ մարմառեայ , այնտեղացն
կենին կու գնայ դէպի քաղաքն ի ճանապարհին կայ գեղեցիկ տաճար
այնտեղն է որ Քս Պետրոսի առաքելոյն երեւացել ա որ ասել այ Տր ո՞
երթաս . եւ Տրն (ասել է) դարձեալ եկից ի Հում խաչիլ այժմ Քոսյ
ոտից տեղն կ(ե)րեւայ . այնտեղացն կենին մոնու քաղաքն կու գնայ սբ
Յովանէս Մկրտիչն խիստ մեծ եւ պայծառ ոսկիակազմ եւ մարմառեայ
եւ անգին քարով շինած եկեղեցի առաջի ժամանակին մեծն Կոստանդիանու-
սի դարպասն ելէլ այժմ եկեղեցի է եւ ինքն է շինէլ խիստ բազում սրբոց
մաս կայ մէջն եւ գերեզմանք ի մէջ ամենեցուն սբ Պետրոսոյ եւ սբ
Պողոյ գլուխն հօն է . եւ քովն մէկ տաճար կայ դեռ աւազանն որ Կոս-
տանդիանոս թագաւորն մկրտել այ մէջն է եւ այլ բազում հիւանալի բան .
այս եկեղեցիս էլ ունի մէկ Դուռն Ողորմութեան . Ժէ . տարէնն մէկ հետ
կու բանայ Այ ողորմութեամբն եւ այս եկեղեցումս շատ զարմանալի բան
կայ որ մարդ չէ կարիլ պատմել . մէկ տաճար էլ կա քովն որ կոչի սբ

Սանդուխտ այն սանդուխտին քարէրն է որ յէրուսաղէմ Պիղատոսի դարպասին դռան վերայ ելէլ որ Տրն մեր Յա Բա վերէն անցել ա չարչար(ան)աց ժամն որ ինչ տեղ արիւն կաթէլ աղեռ տեղն կ(ե)րեւայ . յէմայ հետ բերել ին հօն գրիւ . (թուիմ տեղը թաց թողուած) աստիճան է ծուռկս իջեալ կերթան վերէն ամեն աստիճանի վերա, Ա. Հայր մեր երկին . Ա . Ողջոյն Մարիամ. կասեն. այնտեղացն կու գնայ սբ խաչին եկեղեցին խիստ մեծ պայծառ եւ ոսկիակազմ եւ անգին քարերով շինած . եւ տէրուական կենարար Փայթ խաչն որ Հեղինեա մայրն Կոստանդիանոսի տաքեաց ի Հոռմ հօն կայ պահեալ մեծ պատուով եւ այլ բազում սրբոց մաս եւ գերեզմանք . այն տեղացն կերթայ ի սբ Լօրէնցիոս խիստ պայծառ մեծ եւ ոսկիակազմ եկեղեցի բազում սրոց մասունք եւ գերեզմանք կայ մէջն ի մէջ ամենեցուն սբ Լօրէնցիոսի մարտիրոսին եւ սբ Լստեփանոսի նախա-վկային գերեզմանքն հօն են . եւ կայ բազում ջառներ որ Կոստանդիոսի փամանակին քրիստոնէայքն հօն թաքչիլ ին ելէլ . այստեղացս կերթա ի մեծ Ածածինն խիստ զարմանալի մեծ եւ պայծառ ոսկիակազմ եւ անգին քարերով շինած եկեղեցի շատ սրոց մասունք եւ գերեզմանք կայ մէջն ի մէջ ամենեցուն. մառւր Տն եւ Մաթէոս աւետարանչին գեր(ե)զմանն հօն է . այստեղ էլ կայ Ողորմութեան գուռն որ . Իի . տարէնն մէկ հետ կու բացի Այ ողորմութեամբն . այս են վերագրեալ (ե)օթն եկեղեցիքն . Առաջին սբ Պետրոս եւ սբ Պողոս . երկրորդն այլ սբ Պողոս կոչի երրորդն սբ Սեփաստիանոս . չորրորդն սբ Յովանէս Մկրտիչն . հինգերորդն սբ Խաչին. վեցերորդն սբ Լօրէնցիոս. (ե)աւթներորդն ի մեծ Ածածինն այս է աւմենայն . այս քաղաքումս ամեն ազգի ջոկ հոգատունունի եւ եկեղեցի Հայոց ազգի եկեղեցին կոչի սրբուհի Մարիամ յնգիպատացի եւ սբ Գրիգոր լուսաւորչի խորանն հօն է խիստ պայծառ . եւ այս սբ քաղաքումս . Ժի . քահանայ աւելի կայ կարտինար է հայրապետ է արքեպիսկոպոս է եւ եպիսկոպոս է եւ ամենայն ցեղ քահանայ է պակասութիւն չկայ անթիւ եւ անհամար սարգաւաքունք զարդարեալ են եկեղեցին Այ որպէս զարքաութիւն . ամեն ցեղ ազգի դպրատուն կա եւ ամէն ազգէ կարդացող . անթիւ եւ անհամար վարդապետ կայ այս քաղաքումս . Թէ այս քաղաքումս մարդ . Գ . տարի կենայ ամենայն բանն այս տեղաց գեռ չէ կարիլ տեսնուլ եւ բազում հիւանդատոյն եւ որբատոյն կայ հօս եւ ամենայն քաղաքում որ քաւան Գանակրատանոյ յերկրումն է հիւանդատունք որ կան այսպէս են . կանանցն ուրիշ եւ արանցն ուրիշ . ինչ եղ որ լսեն թէ աղքատ կամ թէ անտէր եւ օտար հիւանդ է կերթան կու բերեն հօն . աւմեն հիւանդատան . Բժ . Գժ . Եժ . յանկողին կա . եւ բազում սպա(սա)ւորք եւ հախիւք որք հանապազ սպասաւորութիւն կանին ինչ որ պէտ է հիւանդացն եւ այս հիւանդատանցս խորան կայ դէմ հիւանդացն եւ քահանայք որ հանապազ ժամ եւ պատարագ կանին վասն հիւանդացն եւ ամենայն հոգեւոր պէտան կու կատարեն. եւ որբատոյնքն այսպէս են ինչ

տեղ որ լսեն թէ որք կայ կամ թէ աղքատի երեխայ կայ որ չէ կարիլ պահել . կամ թէ երեխայ որ պոռնիկութեամբ լիցի գիշերն գաղտիկ կու բերեն դնեն այս հոգէտանս քով ամենայն սոքա կու ժողովեն պահեն մեծացուցեն ուսուցանեն ամենայն ցեղ ու ցեղ վարդապետութիւն թէ կարգալ է թէ դերգիկ (—գերձակ) է կամ թէ խառատութիւն (այսպէս) եւ նկաւ բակերտութիւն կամ թէ կանաց(ի) բան . տղայն ուրիշ . եւ աղջկոյնքն ուրիշ . երբ որ փախի եղան այն պահն վասն Այ համար փող է եւ ամեն պէտէ կուտան եւ կարգին հիւանդաց եւ որբաց կեանքն այսպէս են . եւ ամենայն քաղաքում հոգատուն կայ շինած վասն դարիպ ճանապարհորդի եւ ամենայն պէտան կուտան որպէս տեղաց յօթարութիւն կու բերէ . եւ ամեն քաղաքում . Զ . է . Ժ . է . Ի . է . Խ . է . Ծ . է . Կ . է . քաղաքին զօրայ հաւելոյց եւ կրօնաւորաց ճգնաւորաց եւ կոյսանաց վանք կայ որ վանքում որ . Խ . միաբան կա որում որ . Ծ . կայ յորում որ . ԲԾ . կայ ամենեքեան սոքա ողորմութեամբ են կենդանի եւ այլ բազում բարի բանէր վասն Այ որ մարդ ամեն չէ կարիլ պատմել . Ֆոանկըստան մէկ տարէն ճանապարհ է մէկ եգերէն մինչեւ մէկ այլ եղերն . ամեն քրիստոնայք գեղ գիւղի վերա բերդ բերդի վերա եւ քաղաք քաղաքի վերայ ի ճանապարհն ամենեւին տոյն տանէ չէ կտրիլ խիտ լաւ բարելի աշխարհ է . եւ ես մեղաւորս այսչափ ճանապարհս յամեն մենակ առանց ընկեր(ի) իմ ման եկէլ մինչեւ այս . առաջի հեղն որ Հոռոմ քաղաք եկի թվին մարդեղութեան Տն մերոյ Եր Բի . ՌԶԺԺ . էր ես մեղաւորս դեռ Ֆոանկաց լեզուն չէի գիտել . Լէհի լեզուն դիտէի սիրտս Հոռոմ քաղաք վեր չարեկ միտք արի թէ գնամ դէպի Լէհ այս սբ տեղս ուխտս կատարեցի . եւ . Բ . Լէհիցի հետ ելայ ի ճանապարհ . Ը . աւուրն հասաք ի Լօրէթո Ածածինն որ է ի ծովեզերն ի ճանապարհն մինչեւ այս գեղ գիւղի վերա եւ քաղաք ի քաղաքի վերա յամեն պապին է . ապայ այս Ածածին տաճարս այն տոյնն է որ սրբուհի Կոյսն մէջն կացէլ ա իւր միածին որդին մէջն պահէլ ա եւ մեծացուցել դեռ ամանն եւ գաւաթնին կայ եւ խաժու (այսպէս) ժամանն որ Քոյ կերակուր է տուէլ սրբուհի Կոյսն . եւ իւր սբ ձեռաց բանն եւ քաշածն եւ այլ ցեղ բանէր ի մէջ այս սբ տանս կայ պահած մինչեւ ցոյսօր . այս սբ տունս յնրոսաղէմայ հեռ թռէլ ա եկէլ Այ ողորմութեամբն մինչեւ այս անդս եւ տան դուռ տեղն ամէն մարմառ ա կալած եւ վերէն խիտ հիանալի մեծ եկեղեցի է շինած եւ այս սբ տունս ի մէջ եկեղեցումն է խիտ հրաշալի տեղ է եւ յամենայն յերկրէ սորայ ուխտաւորն պակաս չէ եւ ամենայն եկողի գնացողի մինչեւ . Գ . աւուրն կերակուրն եւ ըմբելին կուտան . այս սբ տաճարիս անթիւ եւ անհամար դարպասոյն ի մէկ տուն ոսկով եւ արծաթով լի է . խաչ է սկ(ի) է գաւազան է կանթեղ է եւ այլ բազում սրբոց մասունք օսկով եւ արծաթով պատած եւ անգին պատուական քարերով շինած յամենայն թագաւորէ հօն պարգեւք կայ կանթեղ է հանդերձ է սկ(ի) է խաչ է գաւազան է վայրագուր է եւ այլ

ցեղ բաներէ եւ բազում ոսկէ եւ արծաթէ աշտանակ կայ եւ այլ բազում հան-
դերձ պատարագի ամեն ոսկաթելով մարդարտով եւ անգին քարով շարած
եւ ալլն մարդ ի բերան չէ կարիլ պատմել . այս տեղացս դուռ ելանք Այ
աջողութեամբն հասանք ի քաղաքն Քարաքով որ է Լէհոյ թագաւորին
աթոռանիստ քաղաքն . ի ճանապարհն մինչեւ այս . Խ . աւուրն եկինք
ամեն տեղ քաղաք քաղաքի վերայ գեղ գիւղի վերայ յամեն բարի քրիս-
տոնէայք . այս քաղաքումս մեր կարքէն . Ա . մեծ վանք կայ սբ Ներսիս-
դուրեան անուանօքն . ՃՄ . միաբան կայ . մէջն եւ սբ Իացինթոսոյ գե-
րեզմանն հօն է որ է մեր կարքէն եւ մեղաւորս միտք արի թէ գնամ մըտ-
նում վանքն սպասաւորութիւն անիմ քահանայոցն ինչ հրամանք որ հրա-
մանն . ապայ քահանայ չեմ օրհնուիլ եւ քահանաութիւն չեմ անիլ . գը-
նացի ընկայ վանոց հօր օտն աղաչեցի թէ զիս ի վանքն առէք ինչ սպա-
սաւորութիւն վերայ որ դնէք կանիմ յանձամբ ապայ չեմ արժան քահա-
նայութեան . վանոց հայրն եւ ամենայն միայրանեօքն ընդունեցին ոչ զիս
ապայ ասացին թէ քահանայ կեղնիս քեզի վանքս կառնունք թէ չէ բարով
եկիր իւր (այսպէս) որ կերթաս գնայ ես էլ քանի աղաչեցի տեսայ որ կամ
չունին զիս սպասաւորութիւն վանքին առնէին այլ կամաւն Այ յանձն առի
թէ քահանայ կեղնիմ ապա թէ զիս ընկալան վանքն եւ քննեցին ամենայն
ինչ որ պատուիրանք է կարքին եւ կարքին ըսգեաւորն յագոցին ինձ . Ա .
տարի փորձեցին զիոքրպէս է օրէն եւ յեղեւ ուխտեցի եւ երթուայ ի կարգն .
Բ . տարի հօն կացի փոքր ինչ լաթինի եւ լէհի լեզուն եւ կարգալն ու-
սայ եւ . Բ . անգամ ի մէջ վաղապետաց քարոզ տուի լաւ ընդունեցին
զիս եւ այս վանքիս վարդապետքն եւ միայրանքն խորհուրդ արին թէ
եկայք Քրայ Աւգոստինոսն ողորկինք Հոռոմ քաղաք մօտ սբ պապն որ
գնա երեց օրհնէ առաքէ իւրեանք աշխարհն քարոզել . ամի մարդեղութեան
Տն մերոյ Յի Բի . ՌՁԺԴ . էր զիս մեղաւորս ձայնեցին եւ հրամանք արին թէ
գնայ Հոռոմ քաղաք . Աձ յիշեցի ելա ճանապարհ Այ աջողութեամբն հասայ
ի քաղաքն Հոռոմ Քարաքովս մինչեւ Հոռոմայ . Խ . աւուր ճանապարհէ .
եւ ես մեղաւորս որ հառայ սրբոց առաքելոց ոտքն գոհութիւն տուի Այ
որ չանարժանս երկրորդ անգամ արժանի արար տեսանելո այս սբ տեղս .
եւ գնացի մօտ Զնեսալն որ բնակի վանքն որ կոչի Մինէրվայ Աձաթին .
լաւ ընկալաւ զիս մօտ նմայ բնակեցա եւ գնացի ընկա պապն իմ .
հալն ծանուցի սբ պապին ինձ կամ արեւտ ի վերայ թխտի գրեալ այսպէս թէ
Ես կամեցա որ Քրայ Աւգոստինոսն քահանա օրհնուի . Ա . շաբաթի մէջն
կամ թէ ի մէջն . Դ . տան լաւ քննեցէք յառաջ եւ տեսէք թէ արժան է
ապայ թէ օրհնեցէք եւ առաքեցէք իւր աշխարհն քարոզէ հօն . եւ վարդա-
պետք ինձ ձայնեցին եւ քննեցին մինչեւ . Դ . ամիսն ապա զիս չանարժան
մեղաւորս օրհնեցին այն տարին որ զիս օրհնեցին թվին մարդեղութեան
Տն մերոյ Յի Բի . ՌՈԺԴ . էր . առաջի . Դ . փոքր աստիճանն որ տուին
մեղաւորիս յուլիս ամսին . Դ . էր աւուրն կերակի . երբ որ կեաւա

սարգաւաքութիւն տուին յուլիս ամսին . ին . աւուրն սը Յակոբայ առաքելոյն . եւ աւաք սարկաւաքութիւն որ տուին էր յուլիս ամսին . ին . աւուրն կիրակի . եւ քահանայութիւն որ տուին էր լիւզոտոտ ամսին . Գ . աւուրն կիրակի . առաջի պատարագն որ աւրի սրբոց գլխաւոր առաքելոց գերեզմանին վերաօգտոտ ամսին . Դ . աւուրն սրբոյն Դօմինիկոսի հօրն մերոյ , եւ գոհութիւն մատուցի Այ որպէս չանարժանս արժանի արար այսպիս(ի) փառաց . զարձեալ դընացի ընկայ սը պապն եւ իւր սը օրհնութիւնն առի եւ մէկ նամակ առի մեր ջէնէրալին վերա որ մեր աշխարհն մէկ վարդապետ ուղարկէ . մեր հալն տեսնու այն ժամն ջենէրալն Հոռոմ քաղաք չէր այլ Բօնօնեայ քաղաքն էր գնացել մօտ սը Դօմինիկոսի հօրն մերոյ գերեզմանն , ի մեծն Հոռոմայ Ած յիշեցի դուս ելա . Ը . աւուրն հասայ ի քաղաքն Բօնօնեայ գնացի ընկայ ջենէրալն պապին նամակն տուի յինքն կարդաց եւ մէկ լաւ վարդապետ արեա անուն Պոդոս եւ իւր իշխանութիւն արեա վիքարութեան վերայ մեր աշխարհին օրհնութիւն առինք ջենէրալէն ելանք ճանապարհ , Զ . աւուրն Այ աջողութեամբն հասանք Վանատիկն խիստ մեծ քաղաք է չինած ի մէջ ծովուն խիստ զարմանալի քաղաք է եւ հիաւնալի չկայ այսպիսի քաղաք ի վերա երկրի սը Մարկոս աւետարանչին գերեզմանն հօն է եւ իւր գլուխ թագաւորութիւն է()*

• •

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՐԱ ԱՆՏՈՆԻ

Արդ ես Յրայ Անթօնիօ Նազարոս ազգաւ Հայ , գաւառէն Երինջակոյ . գիւղէն Ապրայկունայ , ի սը կարգէն Քարոզողաց . ի թիւն ՌՈՀԴ . փետ(ր)ուար(ի) յետին աւուրն եկեալ հասի այս գահանխատ եւ թագայզարդ քաղաքս Փարիզ իջեւանեցայ ի վանս կարգին մերո սը Այ Աւետեաց Ահաթնին , զոր սան Հօնօրասթօ կասեն . գնացեալ զտես գրատանն գթի գիրս այսոր է ձեռացադիր հանգեալ քահան պետին (աշխատ) մերոյ Տր Օգոստինոս Բաճիցի , Նախիջիւանոյ Արհ եպիսկոպոսին զորս յիշատակն օրհնութեամբ եղիցի զի անպատմելի է բարերարութիւն սորայ վերայ վանորէից եւ ժողովրդեան մերոյ իսկ պատճառ գալստեան մերոյ տեղս Այս է զի ի թիւն ՌՈՀԴ մերոյ պատուական հայր Տր Մաթէոս Յովանիցեցին .

(*) Հոս կը վերջանայ Աւգոստինոսի բոլորգիր ձեռագիրն . յետոյ կտագայ Անտոն Նազարոսի նօտրդիր յաւելուածն , որ յաջորդն է :

զկնի վաղջանի վերայ գրեալ արքեպիսկոպոսին , Տր Յակոբին ընդրեալ լինի ի Ժողովողենէ եւ ի եկեղեցականէ տեղի նորա . բայց մինչ ուր պատրաստութիւն տեսանելն որ դիմեցէ ի Հոռոմ առ ի հաստատել . Տր Պողոս Փրօմալ Բալայբերդ օրհնեալ լինի Աղէքսանդր հայրապետէն Արհի եպիսկոպոս Նախիջեւանոյ ի հասանելն սորա վիճակն իւր մեծաւ բերկրու- թեամբ եւ մեծ արանօք ընկալեալ լինի , բայց ոչ ղինի բազում ժամանակի հին թշնամին նախանձոտն սատանա որ բնաւ ոչ երբէք հանգչի , այլ միշտ մեծաւ բաղձանօք շրջէ եւ խնդրէ զորումն ինչ ցանել , արդար յագարակին ցորենւոյ , շարժեցաւ ընդ դէպ այն փոքր եւ ոտից կոխան լեալ անհաւա- տից եւ մանաւանդ հերետիկոսաց փծուն հօտիս մէջ այլայլել եւ խոռվե- ցուցանել ընդ միոխանց . մինչ զի կարգաւորք եւ աշխարհ(հա)կանքն ընդ- դէմ եպիսկոպոսին . եպիսկոպոսն ընդդէմ նոցա անթիւ ամբաստա- նութիւնս գրեցին առ սբ հայրապետն . եւ նա անսեալ որ այսքան խոռվութիւնս լինի , առաքի քննիչս զի իմացի ստոյգն Տր Անդոն Թանի Ֆիֆէնթինն . յորժամ սայ հասնի անդ կամենայ հաշտեցու- ցանել , այլ ոչ կարացի : սայ զամենայնի գրի զոր ինչ անցանի , ընդ արք եպիսկոպոսին դառնան ի Հոռոմ . իսկ ի հասանել սոցա Հոռոմ ժողովքն դատի որ այլ ոչ դարձեն երկոքեան այլ . մնացեն ի տե- ղիս իւրեանց , յորժմ լուեալ ին այս վիճակին մերոյ վերոյ գրեալ Տր Մաթէոս Յովանիսեցին առաքեալ լինի Հոռոմ ի յեկեղեցականաց դուցէ կարիցէ առնել գտեչի արքեպիսկոպոսին . ի հասանելն սորայ առ ջէնէրալն , կ'թանի մոտ պրօկուրայթօրին գաղափառ ինչ դէգրէթի , որ լինի գրեալ այս «Հայաստանոյ արհ եպիսկոպոսն , պարտ է լիցի նոյն ազգէն . եւ ընտրեալ եկեղեցականաց , եւ աշխարհականաց տեղւոյն . » ի տեսանելն բողոքի ժողովքին , զի տացին թող որ կարիցէ քննել , զգաֆտարխանայքն առեալ լինի հրաման մեծաւ ծախիւ որոնի . եւ գտեալ են հրաման ի մատենան , ցուցանի ժողովքին , հրաման լինի լէքցիոնի . քանզի սայ միայն կարգաւոր երէց ունենայ . լէքցիօն տացի հրաժան թէ եւս պարտ է քեզ այլ եւս ընտրութիւն ի ժողովրդոց , գրի մեր վիճակն , վասն ընտրութեան թուղթի , եւ յինքզայ Փարիզ վասն ողորմութեան իւրիք . նոյն ժամանակին առցի ռէգումանդայցիօ վասն գեղորէիցն մեր- ւոց թագաւորէն վերայ Պարսից թագաւորին եւ դարձցի Հոռոմ . ձեռնաւ գրեալ լինի արք եպիսկոպոս , եւ լէզաթ առ թագաւորն Պարսից . ի թիւն Ռիկիթ եհաս աշխարհն մեր եւ մեզ ձեռնադրեաց քահանայ եւ ընդ յինքեան առ տարաւ Սպահան . առ շահն . նա՝ մեծաւ պատուով ընկալաւ . եւ կա- տարեաց զխնդրելին . եւ պատասխանն ամենեցունց զորս ունէր . այսինքն Փափին , Ֆրանցիոյ թագաւորին եւ գրանդուկին , Վան(ա)յտի- կոյ ռէյպուպլիկին եւս եւ այս պատասխանիքս , յանձնեաց մեզ քանզի թագաւորն Պարսից այսպէս կամեցաւ զի յինքն այսինքն մեր Արհեպիս- կոպոսն տեղն մնացէ եւ մեզ առաքեսցէ առ ի հասուցանել պատասխան-

քըն , իշխանացն քրիստոնէից եւ վասն այսր պատճառիս , զմեզ որ էաք
 քնդ յինքեան ի դուռն թագաւորին , եւ զՏր Ազարեայն Ճահկեցի ի միա-
 սին , յղեաց աստ ի յերօքեայ , զորս պառուիրեաց այլ եւս զի ի վերայ
 Մասկով գնալ (ոչ) զի ոչ կամեցաւ թագաւորն Պարսից . ողորմութեամբն
 Այ . եկեալ հասաք Հոռմ . անդի տուաք զթուղ(թ)քն ֆէրսից թագաւորէն .
 Գ . հայրապետին վրայ էր . մէկն Վան(ա)յտիկի . մէկն Ֆիօրէնցիոյ սոքա
 ամենք իւրաքանչիւր ոք տուաք մնաց Ֆրանցիոյ թագաւորինն . զի Վա-
 նայտիկումն սակաւ ինչ բան ունէինք Տր Ազարեայն մնաց տեղն . եւ ֆրայ
 Անդոն Ապրայկունեցիս եկի տեղս տուի թու(ղ)թ թագաւորին Պարսից
 ի ձեռն , թագաւորին . որ այժմն Վար սալեայ (Versailles) կու նստէր մնա-
 ցի մինչեւ թ ամիս . պատասխանն այլ առի յետ դարձայ . իսկ յայսմն
 ամի մեծ պտերազմն ունէր այս թագաւոր ընդ դժմ Օլանդիոյ Իսպանիոյ
 եւ Ալամանին , Ած գիտէ վերջն թէ ինչպէս լինելոց է Այլ եւս երեսն
 սէվ կենայ այս վանքիս մեծաւորին . խիստ լաւ ազաթ արէց մեզի մին-
 չեւ մէկ ամի թամամ տեղս կացի . բաւ է իսկ մեր ճանաչարհն էր այս-
 պէս . նախ Դարբանդ . անդի Հաճթարխան . անչ Մասկովն . անդի Լէհն .
 ի Լէհն Վիէնայ անտի Վան(ա)յտիկն . Վան(ա)յտիկէն Ֆիօրէնցիեայ . Ֆի-
 օրէնցիոյ Հոռմ . Հոռմայ այլ Վանայտիկն Վանայտիկէն Թուրին . Թուրի-
 նոյ Փարիզ . աստի Ած առաջնորդի Մարցելեայ :

Զգրող փրայ Անդոն Նազարու սբ Ածայրանուքեան լիքոր

Fr Antonio Nazari, Le. Armeno ord. Pred. Apracunenzi
 mano proprio. An 1674. 20 Aprili

Digitized by Google